

Դեռ առաջին ստուգաթղթի համար ըսենք նաև որ այդ վրթանէս Արքեպիսկոպոսը եւ հայկական ՈԶԹ թուականը ճիշտ միեւնոյն գրչութեամբ կը յիշատակուին առաջին մասի փոքրիկ յիշատակարանի մը մէջ, ինչպէս վերը գրուած առաջին նկարէն կը տեսնուի(6):

Կը համարինք որ այս յիշատակարանը վրիպած է Գեր. Մըսրէան վրդ.ի աշգէն, եւ այս պատճառով իր գրութեան մէջ սխալ հետեւանքներու յանդամ է: Յարդեւ ի վարդապետը իր մատենագիտութեան մէջ թէեւ յիշատակած է Հ. Հ. Ոսկեանի դերքը՝ սակայն չէ անդրադարձած որ այդ յիշատակարանը հրատարակուած է նոյն դերքին մէջ իբրեւ փաստ Ձմառեան ձեռագրին 1240 թուին գրուած ըլլալուն(7):

Ստույգ է եւ չկայ ոչ մէկ տարակոյս որ Ձմառու ձեռագիրը ամբողջապէս նոյն գրչին օրինակուած է 1240-ին, Գոշի մահէն 27 տարի վերջ: Հետեւաբար այդ ձեռագրին պարունակած չորս յիշատակա-

(6) Յիշատակարանը կ'ըսէ. Տէր Յիսուս ի վաշխումն տացէ տեսուն վրթանիսի արհիպիսկոպոսի եւ հոգեւոր վերադիտողի եւ բազմաց բարիս շնորհողի եւ մոլորեցող դարձուցչի եւ մեղուցեցող միւթարչի: ՈԶԹ:

(7) Ոսկեան Հ. Հ. — Անդ, էջ 156:

(8) Կան քանի մը յիշատակարաններ վերջին շրջաններու գրուած, որոնց գրչութեան արուեստը, նոյնիսկ մեղանքը, այնքան յստակօրէն դանաղանի է որ ոչ մէկ տարակոյս կը թողու թէ տարբեր գրչէ յետոյ աւելցուած է:

(9) Ալիշան. — Հայագրատու, Վենետիկ, 1901, էջ 407, ուր հրատարակուած է նոյն յիշատակարանի եւ Տիկնոջ մաղթելէ վերջ որ Քրիստոս նորոգէ գիրենք «հոգեւոր եւ մարմնով ի կեանս անմահ», կ'աւելցնէ. «եւ ի ներկայիս տառնց փորձանաց պահեստի գաւազնը հանդերձ»: Վարդան պատմիչի համաձայն վախտանդ մեռած է 1214 թուին, իսկ Միւթար Գոշ՝ նախորդ տարին: Համա. Պատմութիւն, Մոսկովա, 1861, էջ 184:

(10) Ալիշան. — Հայագրատու մէջ հրատարակած է անխորհուած յիշատակարանին այդ հատուածը. համա. էջ 408:

րանները, ընծայականը, որ Մըսրէան վրդ. մէջբերած է եւ որոնց վրայ կը հիմնուի իր գրութեան մէջ, ձեռագրի հնութեան ոչ մէկ փաստ կրնան ընծայել, որովհետեւ պարզապէս հաւատարիմ ընդօրինակութիւններ են նախկին ձեռագրի մը:

Ստուգուած ըլլալով Ձմառեան դատաստանագրի թուականը՝ իբրեւ նախնական ձեռագիր եւ հնութեան գրոյժ կրող միակ մեղի ծանօթ ձեռագիրը կը մնայ Ս. Ղազարու գրատան մէջ պահուածը:

Համոզուած ենք որ դժուար է փաստել թէ Վենետիկի դատաստանագիրքը Գոշի իսկական ձեռագիրը ըլլայ: Այս մասին Հ. Վ. Հացունիի խորհրդածութիւնները ընդունելի կը թուին. հարկ է դանաղանել յօրինողը օրինակողէն: Ասիկա սակայն արդեւ մը չէ անոր հնութեան: Ս. Ղազարու ձեռագիրը չունի յետին դարու ոչ մէկ յիշատակարան, որմէ կարելի ըլլայ եզրակացնել անոր պարունակածներուն զուտ օրինակութիւն մը ըլլալը(8): Ինչպէս նաև մինչեւ այսօր չէ յայտնուած ուրիշ դատաստանագիրք մը որմէ կարելի ունեցած ըլլայ Վենետիկի ձեռագիրը: Վախտանդի ընծայականը հանդիսաւոր ու վայելչադեղ գրչութեամբ, իշխանագուններու կենդանութեան օրով գրուած է(9): Այս բոլորը վկայութիւններ են Ս. Ղազարու ձեռագրի հնութեան:

Պատճառ մը չունինք հաւատալու Գոշի վերջին յիշատակարանին, որ Վենետիկի ձեռագրին մէջ կայ, ուր կ'ըսէ թէ դայն աւարտած է նախագրութեան յիշատակարանը դրած տարին, այսինքն 1184(10): Նոյնիսկ եթէ չուզենք հաստատել թէ Ս. Ղազարու դատաստանագիրքը Գոշի իսկական ձեռքով գրուածն է, հարկ է սակայն ընդունիլ որ անկէ անմիջական եւ ուղղակի օրինակութիւն մըն է Միւթար Գոշի կենդանութեան օրով իսկ:

Հ. Հ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԹՈՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՀԱՒԱԲԱԾՈՆԵՐԸ

(Շար. Բազմ. 1952, Թիւ 5-6, էջ 102)

ՈՌԻԲԻՆԵԱՆ ԴՐԱՄՆԵՐ (*)

Ա. — Ընդհանուր ցուցակ. Բ. — Իշխանական դրամներ. Գ. — Մեծ լիւծի դրամներու տեսակներ ու ցուցակներ. Դ. — Բացատրութիւն և մոյջներ. Զ. — Հեթումեան արքաներու դրամներ. Է. — Նզրաւկացութիւն.

Բ.

ԻՇԽԱՆԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Վենետիկի Ս. Ղազարու թանգարանին Ռուբինեան Հարստութեան պատկանող ոսկի, արծաթ, արծաթապղինձ եւ պղինձ դրամներու ընդհանուր թիւն է 648, հետեւաւ ձեռով դասաւորուած.

Իշխանական դրամներ	ԴՐԱՄ
1. Կոստանդին (1095-1099)	1
2. Լեւոն Բ. (1187-1199)	1
Թագաւորական դրամներ	
1. Մեծն Լեւոն Ա. (1199-1219)	355
2. Հեթում Ա. (Հեթ. և Զապէլի պատկերով) (1226-1270)	23
Հեթում Ա.ի պղինձներ (1226-1270)	58
Հեթում Ա. և Քայքոյեան Ա. (Երկկողմեան)	9
Հեթում Ա. և Քայքոյեան Ա. (Միակողմեան)	18
3. Հեթում Ա. և Լեւոն Բ. (ոսկի)	1
4. Լեւոն Բ. (1270-1289)	47
5. Հեթում Բ. (1289-...1305)	4
6. Սմբատ (1296-1298)	7
7. Կոստանդին Ա. (1298-1299)	13
8. Լեւոն Գ. (1301-1307)	20
9. Օշին (Աշին) (1308-1320)	59
10. Լեւոն Գ. (1320-1342)	1
11. Կի Լուսինեան (1342-1344)	3
12. Կոստանդին Գ. Նզրեան (1344-1363)	4
13. Լեւոն Բանակալ (1363-1365)	14
14. Կոստանդին Գ. Նզրեան (1365-1373)	1
15. Լեւոն Ե. Լուսինեան (1374-1375)	7
16. Կեղծ դրամներ	1
17. Գաղտնիստ դրամ	

«Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԻԹՈՐԵԱՆ ՎԱՆՔԻՆ ԲԵՐԱՅՆ ՆՊԱՍՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ» մեր զեկուցումով՝ ըսած էինք. «Առաջին անգամ թորոս եւ Կոստանդին իշխաններու դրամները հրատարակողը եղած է Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ «Սիսուան»ի մէջ: Այս դրամները, ... աշխարհի միակ սուլում օրինակներն են եւ կը պատկանին Ս. Ղազարու թանգարանին(1): Աւելցնենք որ իշխանական երրորդ դրամն ալ որ կը պատկանի Լեւոն Բ. իշխանին (յետոյ Մեծն Լեւոն Ա.) առաջին անգամ հրատարակուած է «Սիսուան»ի մէջ (էջ 483, պատկեր 218): Եօթնամանական թուականներուն, երբ Հ. Սիսուանի Կ. Պոլիս կը գտնուէր, այս դրամը տեսած է Սե-

(*) Նախամետրոպիտան շրջանի Ս. Ղազարու հայկական դրամներու մասին, տես՝ «Բազմալեզու» 1952, Թիւ 5-6, էջ 102-109.
1. «Բազմալեզու» 1951, Նոյն-Գեղար., Թիւ 11-12, էջ 324:

րովքէ Ալիշանի (Հայ Դրամագիրտի) մօտ եւ իր «Դասաւորութիւն Ռուբենեան Դրամոց» հատորի «Յաւելուած»ի մէջ տուած է հետեւեալ մանրամասնութիւնները.

«... Աս դրամէն հատ մըն ալ Հայ Դրամագիրտին քով կը գտնուի, որուն առաջին կողմը շատ մաքուր, բայց երկրորդ կողմն անընթեռնելի բլրաւով, իմ փոքրիկ դրամոյս ընթերցումէն յայտնի եղաւ Ստեփանէի բլրաւը: Հայ դրամագիրտին դրամն աւելի մեծ ու հաստ է, իմինիս կրկնէն աւելի» (2): Սակայն, մեզի ծանօթ դրամագիրտ վերջաւորութեան պատճառով, Սիւլիւեանի դրամը Ալիշանի «Սիսուան»էն եօթը տարի վերջ միայն լոյս տեսաւ: Հոս պարտինք ճշտում մը կատարել: Ս. Ղազարու վանքին պատկանող երկու իշխանական դրամներն են՝ Կոստանդին եւ Լեւոն իշխաններու դրամները եւ ոչ թէ Թորոս եւ Կոստանդին իշխաններունը, որովհետեւ՝ Թորոս իշխանի մեզի ծանօթ այդ միակ օրինակը որ կը պատկանէր Ս. Ալիշանին, զո՛հ զնաց Կ. Պոլսոյ Բերայի մեծ հրդեհին: Իշխան Լեւոն Բ. ի դրամի մասին ժամանակագրական կարգով խօսած են՝ Ալիշան «Սիսուան»ի մէջ, Սիւլիւեան-Գա-

2. Սիւլիւեան, «Յաւելուած» էջ 78, Տե՛ս նաեւ Monnaies des Princes chrétiens d'Orient à l'époque des Croisades par G. Schlumberger (Ext. de la Revue Archéologique 1875) էջ 8, ուր՝ հեղիւ պնդեալ դրամներու տարբերութեամբ «... nous pouvons annoncer la publication prochaine, par notre ami le savant P. Cl. Sibilian, de deux fort curieuses monnaies en cuivre frappées par Léon d'Arménie étant encore simple prince régnant, et par conséquent avant son élévation à la royauté...» Արդեօք ինձի անծանօթ եւրոպական ո՛ր է է դրամագիրտական հանդիսի մէջ նախապէս այս դրամներու հրատարակեց Հ. Սիւլիւեան, թէ Schlumberger-ի ակնարկութիւնը անոր «Դասաւորութիւն Ռուբենեան Դրամոց» հատորի մասին է, որ շատ ուշ տպագրութեան յանձն տուցաւ:

լէմքէրեան «Դաս. Ռուբ. Դրամոց» հատորին մէջ, Ս. Երէցեան «Բազմավէպ»ի մէջ, իսկ Տոքթ. Տէր Ղազարեան Զուարթնոց ամսագրի մէջ: Այս խիստ հազուադէպ դրամէն օրինակ մը կը գտնուէր Տոքթ. Տէր Ղազարեանի մօտ, որ սակայն կորսուեւր է: Երկրորդ օրինակը կը գտնուէր Ս. Երէցեանի հաւաքածոյին մէջ, որ ասկէ քանի մը տարի առաջ գնուեցաւ (մօտ 120 տեսակ կիլիկեան դրամներու հետ միասին) սիւրիարեան Տոքթ. Քանթարճեանէ եւ ներգաղթի առիթով նուիրուեցան Երեւանի Պետական Պատմական Թանգարանին: Երրորդ օրինակը խիստ լատպահուած, կը գտնուի Բարիդի Նուպարեան Մատենադարանի փոքրիկ հաւաքածոյին մէջ: Նոյն այս դրամներէն, սակայն աւելուած վիճակի մէջ, Բարիդի Ֆրանս. Ազգ. Մատենադարանի Հնութեանց ու շքադրամներու հանդիսարանի հայկական դրամներու հաւաքածոյին մէջ կայ երկու օրինակ: Ընդամէնը ուրեմն վեց դրամ:

Հրատարակուած ու բաւական ալ ուսումնասիրուած այս դրամը սակայն չէ արժանացած մեր բանասէրներու ու գիտնականներու լուրջ ուշադրութեան ու քննութեան: Ռուբինեան ամենահետաքրքրական դրամներու շարքին կարելի է դասել զայն: Երբ առիթը ունենանք առանձին ուսումնասիրութեամբ զայն ներկայացընելու, թերեւս չափով մը նպատաւով պիտի ըլլանք Միջնադարեան մեր պատմութեան մութ մնացած կէտերէն միոյն պարզաբանութեան:

Գ.

ՄԵԾՆ ԼԵՒՈՆԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Ս. Ղազարու Թանգարանի Մեծն Լեւոնի դրամները 270 տեսակ – ենթատեսակներէ կը բաղկանան եւ նոյն տեսակի աշխարհի ամենաճոխ հաւաքածոներէն մէկը կը կազմեն:

Մեծն Լեւոնի արծաթ դրամներն են՝

1. Օծման դրամներ,
2. Երկդրամեան եւ կէս-երկդրամեաններ,
3. Կրկնադրամ դրամներ ու կիսադրամներ:

1. — ՕԾՄԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Օծման դրամները երկու տեսակի կը բաժնուին՝

- Բ. կողմը մէկ առիւծով,
- Բ. կողմը երկու առիւծով:

Մէկ առիւծով դրամները խիստ հազուադէպ են: Մեզի ծանօթ օրինակներն են՝

Վիեննայի Միսիք. Թանգ., երկու օրինակ:
Վիեննայի Միսիք. Թանգ., մէկ օրինակ:

Կրկնադրամ օծման դրամները կը բաժնուին երկու խումբերու, երեք ենթախումբերու եւ տասը շարքերու:

	ԴՐԱՄ	ԴՐԱՄ
Ա. խումբ. Ճաշագայրաճեւ Ս. Հոգիով	3	3
Ա. խումբի Ա. ենթախումբ	1	1
Ա. » Բ. »	2	4
Բ. խումբ. Աղաւակերպ Ս. Հոգիով	2	3
Բ. խումբի Ա. ենթախումբ	1	1

Այս դրամները եւս պէտք եղած չափով չեն ուսումնասիրուած եւ որ ա՛յնքան հետաքրքրական ուսումնասիրութեան նիւթեր կը պարունակեն անոնց վրայի կերպարները մեր տոհմային – պատմական սովորութիւններու տեսակէտէն: Օծման դրամներու ամենաճոխ հաւաքածոն կը պատկանի Վիեննայի Միսիք. Թանգարանին:

2. — ԵՐԿԴՐԱՄՆԵԱՆ ԵՒ ԿԵՍ-ԵՐԿԴՐԱՄՆԵԱՆՆԵՐ

Վանքին այս դրամները գեղեցիկ ամբողջութիւն մը կը կազմեն եւ կարելի է զանոնք դասել նոյն տեսակի աշխարհի հաւաքածոներու կարգին: Երկու դրամեաններու աշխարհի ամենաճոխ հա-

ւաքածոն կը գտնուի այժմ Երեւանի Պետական Պատմական Թանգարանը, ծանօթ Տափնէի Դրամագիրտ անունով, որ ներգաղթի առիթով պէյրութաբնակ Տ. Արմենակ Բօլատեանի կողմէ նուիրուեցաւ Երեւանի Թանգարանին: Երկրորդ հարուստ հաւաքածոն կը գտնուի Բարիդի Ազգային Մատենադարանի Շքադրամներու Հանդիսարանին Կ. Շիւմպերտի հաւաքածոյին մէջ: Երրորդ մեծ հաւաքածոն է ուրեմն Վիեննայի Միսիք-արեան Թանգարանին: Վիեննայի Թանգարանի դրամներու մասին առաջմ որոշ կերպով չենք կրնար արտայայտուիլ, որովհետեւ չենք կրնար արտայայտուիլ (էջ 8, ծանօթ. 1), ըստ Հ. Սիւլիւեանի (էջ 8, ծանօթ. 1), իրենց Թանգարանի 15 երկդրամեաններու ընթերցումն է ԹԳՐ (որ կը նշանակէ նոյն տեսակ): Սակայն մենք կը կարծենք որ 1892-էն առդին, Վիեննայի Միսիքարոր Թանգարանը Թանգարանն եւս մեծ թիւով եաններու Թանգարանն եւս մեծ թիւով նոր դրամներ աւելցուցած ըլլալու է երկնոր դրամներու հաւաքածոյին վրայ եւ դրամեաններու հաւաքածոյին վրայ եւ հաւանաբար անոնց թիւն ալ կրկնապատկուած:

	ԴՐԱՄ	ԴՐԱՄ
Ա. խումբ. Վարդեակ-ով	5	6
Բ. խումբ. Կիտաւոր	2	3
Գ. խումբ. Ամբողջական խորագրով	2	2
Եւ Ա. կողմը քաղաքայի առիւծներով	1	1
Դ. խումբ. Առանց նշանի		

	ԴՐԱՄ	ԴՐԱՄ
ԿԵՍ-ԵՐԿԴՐԱՄՆԵԱՆՆԵՐ	1	1
Ա. խումբ. Վարդեակ-ով	4	4
Բ. խումբ. Գ. ի նման մեկագրով		
Գ. խումբ. Ամբողջական խորագրով	1	1
Եւ Ա. կողմը քաղաքայի առիւծներով	1	1
Դ. խումբ. Առանց նշանի		

Աւելցնենք որ մեզի ծանօթ վերոյիշեալ բոլոր հաւաքածոները ունին իրարմէ տարբեր տեսակներ ու ենթատեսակներ, որոնք զիրար կը լրացնեն եւ ամբողջութիւն մը կը ձեւացնեն:

3. — ԿՐԿՆԱՌԻԻԾ ԴՐԱՄՆԵՐ

Կրկնառիւծ. դրամներու թիւն է 284 դրամ, որուն 246-ը կրկնակներ են (en double): Կը բաժնուին 24 խումբերու, 14 ենթախումբերով եւ 136 շարքերով: Դրամներու մեծամասնութիւնը կը պատկանի ա՛յն դրամադիւտին որու մասին Հ. Սիպիլեան տուած է խիստ հակիրճ տեղեկութիւն մը միայն: Ժամանակին փոքր Ասիոյ մէջ յայտնաբերուած այս հայկական դրամներու ամենամեծ դրամադիւտը կորսուած կը կարծուէր, որովհետեւ ո՛չ վիեննայի Միս. Թանգ. քննիչ. ցանկին եւ ո՛չ ալ Բաժնաւորներին «Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն» հաստիւն մէջ այս ուղղութեամբ ու եւ է յիշատակութիւն չկայ: 1951 Յունիսին ստորագրած «Ի խնդիր գիտական ու քննական հայկական դրամագիտութեան» («Հասկ», Փետրուար 1952, էջ 51) յօդուածովս հարց կու տայի.

«Որո՞նք էին Իզմիրտէն դէպի Էնկիւրի նորակառոյց երկաթուղագծի նամբուն վերայ յայտնաբերուող 500 արծաթ դրամներէ բաղկացեալ Մեծն Լեւոնի պատկանող դրամագիտին 14 գլխաւոր տարբերութիւնները եւ ո՞ր կը գտնուին անոնք»:

Չանցած մի քանի ամիս, վերեւ դրուած հարցումը իր լուծումը կը ստանար: Անցեալ տարի երբ կը քննէի Ս. Ղազարու Մեծն Լեւոնի կրկնառիւծ դրամները, դարձանալի նախազգացումով մը օգնական վանական Հայրերուն կը կրկնէի. «Այս դրամները մէկ մէկ հաւաքուած պարզ հաւաքածոյի մը դրամներուն չեն նմանիր, դրամագիտի մը պատկանող դրամներուն նկարագիրը կը մատնեն եւ այլն»: Այնքան խօսեցայ, դրամադիւտի մը կարելիութեան մասին այնքան պնդեցի, որ հետաքրքրութիւնս դո՛հացնելու համար Մեծ. Հ. Հմայեանի դիւանը: Օրեր տեւող երկար փնտրութիւններէ վերջ ձեռք ձգեցինք այն բոլոր

վաներաթուղթերը որոնք կը հաստատէին մեր կասկածը եւ կը յայտնէին՝ թէ վանքի այս դրամներուն մեծամասնութիւնը կը պատկանէր Իզմիրտ — Էնկիւրի նշանաւոր դրամադիւտին: Ներկայ դեկտեմբերով չենք կրնար այս դրամադիւտի մասին աւելի երկար խօսիլ, այդ մեղմէ պիտի պահանջէր շարունակելի յօդուածներու շարք մը: Կ'ուզենք միայն յայտնել եղբայրութիւնը, ինչպէս նաեւ մեր ուրախութիւնը որ այս դրամադիւտն եւս մեր միջոցաւ յայտնուեցաւ:

Նախախնամական բան մը կարծէք որ հայկական դրամներու դրեթէ նշանաւոր բոլոր դրամադիւտերը մեր միջոցաւ կը յայտնուին եւ կամ պիտի յայտնուին: Բացի «Տափնէի» երկդրամեաններու եւ Իզմիրտ-Էնկիւրի վերեւ յիշուած նշանաւոր դրամադիւտերէն, այժմ ձեռքի տակ ունիմ Տիար Ա. Բօլատեանի սեփականութիւնը հանդիսացող մի քանի այլ նշանաւոր դրամադիւտերու շարք մը, ինչպէս Տարսուցի, Անտիոքի եւ այլն: Անձնական հաւաքածոյիս մէջ ալ ունիմ 1100 դրամէ բաղկացեալ խաչակրաց շրջանէն դրամադիւտ մը որ կը պատկանէր Անտիոքի իշխան Միակայի Պեմուռտի եւ անոր հակառակորդ Ռուբէն իշխանին, որ քանիցս իշխանութեան տիրացաւ շնորհիւ մեծ հօր Մեծն Լեւոնի հայկական բանակներուն: Երբ օր մը կարելի ըլլայ այս բոլորը հրատարակել, մեր ազգային դրամադիւտութիւնը մեծապէս պիտի հարստանայ: Տարսուցի եւ Իզմիրտ-Էնկիւրի դրամադիւտերու դրամներու թիւն ու արժէքը իրարու հաւասար կարելոր են այն բանով որ այս երկու դրամադիւտերու դրամները իրար կ'ամբողջացնեն: Մէկը՝ Տարսուցի դրամագիտը՝ հարուստ արուեստով փորագրուած դրամներով, իսկ միւսը ճոխ է պարզ արուեստ դրամներով: Նպատակ ունինք այդ երկու դրամադիւտերը ամբողջութեամբ եւ առանձինն հրատարակել: Ար-

ղէն երկու դրամադիւտերուն յատուկ դասաւորութեան նախապատրաստական աշխատանքները կատարուած են:

Մեծն Լեւոնի կրկնառիւծ դրամները կը բաղկանան երկու գլխաւոր մասերէ, որոնք հետեւեալներն են.

Ա. Արուեստով փորագրուած դրամներ. Բ. Պարզ արուեստ փորագրութեամբ (style barbare) դրամներ:

Արուեստով դրամները կը բաժնուին 6 խումբերու, 6 ենթախումբերով, փոխանցման 3 խումբերով, բաժնուած 57 շարքերու: Դրամներու թիւն է 130 դրամ եւ 3 կիսադրամ (Տես Ա. ցանկը եւ ՏԽ. Ա.):

ՄԵԾՆ ԼԵՒՈՆԻ

ԿՐԿՆԱՌԻԻԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՑԱՆԿԵՐԸ

Ա. ՑԱՆԿ

ԱՐՈՒՆԵՍՏՈՎ, ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Խումբ	Թիւ	Ենթախումբ	Փոխանցման խումբ	Շարք	Դրամ	Կիսադրամ
Ա	1	Առաջին	Առաջին	10	30	2
—	2			1	1	
—	3			1	1	
—	3	Երկրորդ	Առաջին	2	1	
—	4			1	4	
—	5			2	4	
Բ	6	Առաջին	Երկրորդ	13	36	
—	7			3	4	
—	8			6	21	
Գ	9	Առաջին	Երկրորդ	1	2	
—	9			3	9	
—	9			3	9	
Դ	10	Առաջին	Երկրորդ	2	3	
—	11			6	9	
—	12			1	1	
Ե	13	Առաջին	Առաջին	3	5	1
—	14			1	3	
—	14			1	3	
6	6	6	3	57	130	3

Բ. ՑԱՆԿ

ՊԱՐԳԱՐՈՒՆԱՍ ԳՐԱՄՆԵՐԸ

Խումբ	Թիւ	Ենթ. խմբ.	Փոխանցման խումբ	Շարք	Դրամ
Ա	1	Առաջին	Առաջին	8	16
—	2			1	1
—	2			2	5
Բ	3	Առաջին	Երկրորդ	10	21
—	4			1	1
—	4			1	1
Գ	5	Առաջին	Երկրորդ	3	8
Գ	6			4	6
—	7			1	1
Ե	8	Առաջին	Երկրորդ	3	6
—	8			1	1
—	8			1	1
Զ	9	Առաջին	Առաջին	3	3
Է	10			5	9
Ը	11			1	1
—	12	Առաջին	Առաջին	2	3
—	13			1	2
Թ	14			7	15
Ժ	15	Առաջին	Առաջին	1	1
ԺԱ	16			6	19
—	17			1	1
ԺԲ	18	Առաջին	Առաջին	3	5
—	19			5	9
ԺԳ	20			1	2
ԺԴ	21	Առաջին	Առաջին	1	1
—	22			1	1
—	23			1	1
ԺԵ	24	Առաջին	Առաջին	1	2
—	25			1	2
ԺԶ	26			1	2
18		8	3	79	151

Մինչեւ հիմա զտնուած բոլոր կիսադրամները կը պատկանին արուեստով դրամներու խումբերուն միայն, եւ կարելի բաժնուած 3 խումբերով, որոնք բաժնուած չեն եղած ոչ իսկ մէկ հատ պարզարուեստ դրամներու: Դրամներու թիւն է 151, կիսադրամ չկայ (տես Բ. ցանկը եւ ՏԽ. Բ.):

ՏԱԽՏԱԿ Ա.

ԱՐՈՒԵՍՏՈՎ ՓՈՐԱԳՐՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐ

Թ/Լ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Խումբ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Պ	Ր	Տ	Վ	Ծ

Խոշերերը, Ենթախոշերերը և փոխանցման Խոշերերը
իրարմե զանազանող մայր նշաններ:

ՏԱԽՏԱԿ Բ.

ՊԱՐԶԱՐՈՒԵՍ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԻ ԴՐԱՄՆԵՐ

Թ/Լ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Խումբ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Պ	Ր	Տ

Թ/Լ	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
Խումբ	Ժ	Ի	Լ	Խ	Կ	Պ	Ր	Տ	Վ	Ծ	Շ	Ո	Չ	Ժ

Խոշերերը, Ենթախոշերերը և փոխանցման Խոշերերը
իրարմե զանազանող մայր նշաններ:

Դ.

Որպեսզի հասկնալի դառնայ Ա. և Բ. տախտակներուն խաչածե նշաններուն իմաստը, կու տամ կարգ մը ծանոթութիւններ: Ընդհանուր ցանկերէն տեսանք որ

Մեծն Լեւոնի կրկնադիւծ դրամները բաժնուած են երկու մասի, այսինքն արուեստով ու ոճով իրարմէ բոլորովին տարբեր խումբերու, հաւանաբար երկու տարբեր փողերանոցներու արդիւնք: Մեծն Լեւոն իշխած է որպէս թաղաւոր

մօտ քսան տարի: Իր մահէն մինչեւ Փիլիպպոսի մահը, չուրջ եօթը տարի, Փիլիպպոսի կամ Զապէլի անունով նոր դրամ տպուած է: Հաւանաբար չարունակուած է Լեւոնի անունով դրամահատութիւնը, ու Սիւսի կամ Տարսոնի փողերանոցները չարունակաբար տպած են միայն կրկնադիւծ տիպարը (type) ներկայացնող դրամներ, ինչպէս նաեւ այլ արծաթ, արծաթապղինձ կամ պղինձ դրամներ:

Մեր փողերանոցները եթէ տարին նըւազաւոյն մէկ անգամ փոխել ուղէին դրամահատութեան (émission) նշանները, մենք մեր դրամներուն վրայ պիտի ունենայինք 27 տարբեր խումբեր ներկայացնող 27 մայր նշաններ: Իսկ եթէ սկզբունքով ընդունինք մէկէ աւելի փողերանոցներու դոյութիւնը երկրին մէջ (ինչ որ հաստատապէս կարելի է ընդունիլ դէթ Տարսոն քաղաքի ծանօթ փողերանոցին համար), այն ատեն մայր նշաններու թիւերը բնականօրէն կը կրկնապատկուին:

Ուրեմն Ա. և Բ. տախտակներուն վրայ տեսնուող իւրաքանչիւր խաչածե նշան (կամ նշանախումբ) կը համապատասխանէ տարուան մը ընթացքին հատադրուած բոլոր դրամները ներկայացնող որոշիչ մայր նշանին: Որոշիչ ո՛րքան նշան՝ այնքան խումբ, եւ ո՛րքան խումբ՝ այնքան տարբեր շրջան: Ս. Ղաղարու Թանգարանը ունի արուեստով դրամներու վեց խումբ (ՏՍ. Ա.), հաւանօրէն Տարսոնի փողերանոցէն իսկ պարզարուեստ դրամներու տասնեւութը խումբ (ՏՍ. Բ.) հաւանօրէն Մեր փողերանոցէն ելած: Հին ժամանակ Մեր ճաւոր Արեւելքի դրամահատութիւնը կը նորոգուէր տարի տարի (բիւզանդական, արաբական, սելճուքեան սովորութեամբ): Ասոր մէկ ցայտուն օրինակը կը հանդիսանան Հեթում Ա. և Քայխուստով Բ. ի երկրեզուեան դրամները, որոնք կանոնաւոր կերպով տարին անգամ մը փոխած են թւականի հետ նաեւ խումբերու, շարքերու

և չարքի տարբերակներու նշանները: Մեր այս փաստարկութիւնները հիմնուած են մի միայն դրամներու վրայ, որովհետեւ այս տեսակէտով մեր պատմական մատենագրական աղբիւրները բացարձակ լուծութիւն կը պահեն:

Միջնադարուն դրամներու նմանահանութիւնը կաղապարի վրայ (copie) տեղի կ'ունենար մասնաւոր կերպով պատրաստուած օրինակի մը (modèle) վրայէն, որուն միջնադարեան Ֆրանսայի մէջ կու տային badron կամ patron անունը: Այս օրինակը չարունակաբար ամբողջ տարեշրջանին կ'ընդօրինակուէր հայ եւ օտար վարպետներու կողմէ:


Փորագրիչներու դործերը մէկը միւսէն զանազանելու համար փողերանոցի վարչութիւնը ամէն փորագրիչի կը յանձնէր մասնաւոր պատուէր մը: Ամէն փորագրիչ պարտաւոր էր իրեն յանձնուած այդ պատուէրը դործադրել ամբողջականօրէն ու բժախնդրութեամբ:

Ի՞նչ էին այդ պատուէրները եւ ի՞նչպէս փորագրիչի մը դործը կը զանազանուէր ուրիշ փորագրիչի մը դործէն:

Դրամի օրինակը որուն առաջին կողմը կը ներկայացնէ առիւծաքար գաւի մը կը վրայ բազմաթիւ պատկերը, իր շուրջի շուրջ մարդարտաշար շրջանակներէն շուրջի շուրջ մարդարտաշար շրջանակներէն մէջ ունի ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ խորագիրը:

Դրամին երկրորդ կողմը որ դէմ-յանդիման եւ կրկնաքեւ խաչի մը շուրջ կանգնած գոյգ մը առիւծներ կը ներկայացնէ, իր շուրջ մարդարտաշար շրջանակին մէջ իր շուրջ մարդարտաշար շրջանակին մէջ ունի՝ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ խորանունը: «Կարողութեամբն զիրը, որ կը նշանակէ «Կարողութեամբն Աստուծոյ Լեւոն Թագաւոր Հայոց»:

Արդ, ճարտարները պարտաւոր էին պահել երկու կողմի պատկերագրութիւնը անփոփոխ, սակայն կը փոխէին առաջին կողմի խորագրի մէկ մասը միայն, հետեւեալ ձևով



նիք յարմարութիւններ կը պակսէին եւ համապատասխան տեղի կ'ունենար նախնական պարզ միջոցներով: Կաղապարները կը զետեղուէին զողաւոր երկար ունեւրի մը երկու ծայրերուն, որոնց միջեւ կը դրուէր մետաղեայ բարակ թերթ մը: Սալին վրայ զետեղուելով կը ստանար ծանր մուրճի հարուած մը որ մետաղեայ բարակ շերտին վրայ կը դրոշմէր վերի ու վարի կաղապարներուն պատկերները: Ամէն հարուածի, ունեւրիին ծայրի կաղապարները որոշ աստիճանով մը կը տեղափոխուէին: Այս է պատճառը որ մեր կիւրիկեան միւնետոյն կաղապարներէն զուրա եկած դրամները չեն ներկայացներ կողմերու դիրքաւորումի միշտ միւնետոյն համեմատութիւնը: Կըրկնակ (en double) սակայն միշտ շարժուն այս դրամներուն կու տանք հատագրութեան փոփոխակ (variété de frappe) անունը: Եթէ օր մը կարելի ըլլայ նման դրամներու ամբողջութիւն մը դտնել կամ կաղմել, պիտի կարենանք մօտաւոր չափով տալ կիւրիկեան աշխարհի համար եւ տարուան մը ընթացքին հատադրուած ու չըջարեւութեան դրուած դրամներու քանակը:

Հայկական դրամներու շարժուն այս նիւթական նկարադրիւր ունի նաեւ ուրիշ առաւելութիւն մը: Այսպէս՝ եթէ ձեզի ներկայացուած խումբ մը բացարձակապէս միւնետոյն կաղապարէն ելած դրամները քննելով հաստատե՞ք որ կողմերու երեսները միւնետոյն դիրքաւորումը կը պահեն, այն ատեն վստահօրէն կրնաք կառկածիլ անոնց խելութեանը վրայ: Նման դրամներ ընդհանրապէս թափծու կ'ըլլան եւ Ս. Ղազարու հաւաքածոյին մէջ մենք նմանօրինակ դրամներու ալ հանդիպեցանք, որոնց առջեւ կեղծ բառը աւելցուցինք:

Եզրակացութիւն.

Խումբերը կը համապատասխանեն շերտ-շաներու, տարիներու: Տարուան մը աշ-

խատանքը բաժնուած է խումբ մը շարքերու: Ամէն շարք դործն է փորագրիչի մը կամ ընկերովի աշխատող մէկէ աւելի փորագրիչներու:

Շարքը բաժնուած է տասներկու մասի որ հաւանաբար կը համապատասխանէր տարուան 12 ամիսներուն: Շարքին 12 տեսակ դրամներուն կը տրուէր Շարքերու տարբերակներ (variétés de séries) անունը: Շարքի ամէն տարբերակ կը համապատասխանէ փորագրիչի մը ամսական աշխատանքին. ունի իր կաղապարի-տարբերակները (variétés de coins) որ համանման կաղապարէ մը ընդօրինակուած այդ կաղապարներու համապատասխան է: Շարքի տարբերակներն ու կաղապարի տարբերակները ունին իրենց հատագրութեան փոփոխակները (variétés de frappe) որոնք կը համապատասխանեն միւնետոյն կաղապարներէն հատադրուած դրամներու քանակին:

Թիւրիմացութեան տեղի չտալու համար ըսենք որ վերեւ յիշուած խումբերու եւ անոնցմէ յառաջացող շարքերու տրուած օրինակը կը պատշաճի Ս. Ղազարու Թանգարանի Մեծն Լեւոնի կրկնադրած դրամներուն միայն: Այս ինչ թաղաւորի եւ այն ինչ տիպար դրամի հատադրութեան յատուկ մանրամասնութիւնները պէտք չէ փնտռել ուրիշ մէկ թաղաւորի պատկանող դրամներուն վրայ եւս: Հիմնական կէտերուն մէջ հատադրութեան օրէնքները մընալով նոյնը, կը փոխուին միայն ներկայացնելու ձեւերը: Այնպէս որ շատ քիչ բացառութեամբ ամէն տեսակ դրամ ունի իրեն յատուկ խումբեր եւ շարքեր կաղմելու եւ ներկայանալու ձեւ մը: Արդէն այս է պատճառը որ մեր դրամադիտութիւնը տաղտկալի միօրինակութենէ չի տառապիր ու ցոյց կու տայ մեր փողերանոցներու վարպետներուն արուեստագիտական ճարտարութիւնն ու յղացումի համարձակութիւնը:

Ե.

Այժմ անցնինք պղինձ դրամներուն: Մեծն Լեւոնի «Փող» կոչուած պղինձները զլիսաւոր երկու բաժանում ունին.

ա) 5, 6 եւ 7 կիտեան թաղով եւ «Չխոպոպաւոր» խումբեր:

բ) 5 եւ 6 կիտեան «խոպոպաւոր» խումբեր:

Առաջին բաժանումի խումբերը ունին 22 դրամներէ կաղմուած 12 շարքեր, իսկ երկրորդ բաժանումի խումբերը՝ 18 դրամներէ կաղմուած 9 շարքեր:

Մեծն Լեւոնի պղինձ դրամներու խումբերը կը կաղմուին ոչ թէ Բ. կողմի խաչաձեւերով, այլ՝ այդ բաժանումը կը կատարուէր Առաջին կողմի թաղապարդ առիւծի թաղին վրայի զարդաքարերուն համարանքովը եւ խոպոպներովը:

Այսպէս՝

Ոչ խոպոպաւոր խումբերը ունին.

Ա. Խումբ.	Թաղ 5	զարդաքարերով	զարդարուած
Բ.	»	» 6	»
Գ.	»	» 7	»

Խոպոպաւոր խումբեր.

Ա. Խումբ.	Թաղ 5	զարդաքարերով	զարդարուած
Բ.	»	» 6	»

Հետաքրքրական են նաեւ շարքերու կաղմութեան ինքնուրոյն ձեւերը: Այստեղ անոնք չեն կաղմուիր խորագրի որոշ մէկ մասի փոփոխութեամբ, այլ՝ անոնք կը կաղմուին առիւծի մօրուքին զծագրութեան կիտաղրական յօրինուածքով եւ այդ կէտերու յարաչարժութեամբ:

Օրինակ՝

Ա. Խումբի Ա. շարքի առիւծի մօրուքը ունի կէտադրական հետեւեալ յօրինուածքը.

	Ուղղահայեաց	Հորիզոնական
Ա. Շարք —	5 կէտ	1 + 4 + 4 կէտեր
Բ. » —	6 »	5 + 5 + 3 »

Զ.

Հեթում Ա.ի ԴՐԱՄՆԵՐԸ

Հեթում Ա.ի դրամները կը բաժնուին չորս մասի.

Ա) Հեթում եւ Զապէլի պատկերով արծաթ դրամներ.

Բ. եւ Գ.) Հեթում Ա. եւ Քայքոբատ Ա., Հեթում Ա. եւ Քայխոսրով Բ.ի երկ-լեզուեան արծաթ դրամներն ու կիսադրամները.

Դ) Մեծ ու փոքր պղինձ դրամները:

* * *

Ա) Հեթում եւ Զապէլի պատկերով արծաթ դրամները կը բաժնուին զլիսաւոր երկու մասի.

ա. — վազով առիւծ տիպարով պարզարուեստ դրամները.

բ. — իսապարս առիւծով եւ արուեստով դրամները:

Առաջինը՝ բաժնուած է 2 խումբի, 5 շարքի, 15 դրամներով.

Երկրորդը՝ բաժնուած է 3 խումբի, 7 շարքի, 2 կիսադրամով եւ 6 դրամով:

Բ) Հեթում Ա. եւ Քայքոբատ Ա.ի երկ-լեզուեան դրամները ունին զլիսաւոր երկու բաժանում.

ա. — Անկատար խորագրով դրամներ.

բ. — Ամբողջական խորագրով դրամներ:

Անկատար խորագրով դրամները բաժնուած են երկու խումբի:

Ամբողջական խորագրով դրամներն եւս բաժնուած են երկու խումբի:

Դրամներու թիւն է 8, կիսադրամ 1, բաժնուած չորս շարքերու:

Գ) Հեթում Ա. եւ Քայխոսրով Բ.ի երկ-լեզուեան դրամները ունին նոյնպէս զըլիսաւոր երկու բաժանում.

ա. — Անքուակիր դրամներ.

բ. — Թուագրեալ դրամներ:

Անթուակիր դրամները բաժնուած են երեք խումբի:

Թուղթերով դրամները կը կրեն Հիճրէ-թի 637, 639, 640 եւ 641 թուականները:

Դրամներու թիւն է 16, կիսադրամ 2, բաժնուած 13 շարքերու:

Երկկողման դրամներու աշխարհի ա-մենաճոխ հաւաքածոն կը գտնուի Վիեն-նայի Միթարեան Թանգարանը:

Դ) Հեթում Ա.ի պղինձ փողերը կը բաժ-նուին երկու մասի.

ա. - Առիւծաբարձ գահով դրամներ.

բ. - Պարզ գահով դրամներ:

Առիւծաբարձ գահով դրամները միւս պղինձներէն աւելի հազուադիւր են, բաժ-նուած են 2 խումբի, 4 շարքով եւ 8 դրա-մով:

Պարզ գահով պղինձները մեծամասնու-թիւն կը կազմեն եւ ունին հետեւեալ պատ-կերը.

Խումբ	Ենթախմբ.	Շարք	Դրամ	Խումբի նշաններ
Ա.	Ա.	3	6	Պարզ
Բ.		1	1	
		3	10	Գահի տար-բերութիւն
Գ.		5	5	Աստղանշա-նով
Դ.		1	2	Միտանի գահով
Ե.		1	1	Ծաղկանշա-նով
Զ.		1	1	Կիտանշանով
6	1	15	26	

Հեթում Ա. ունի ծաւալով ու ծանրու-թեամբ մի այլ «Փողերու» խումբ, որուն պատկերազարդութիւնը Չիաւր է: Բաւա-կան հազուադիւր այս դրամներէն վանքը ունի 13 դրամ, բաժնուած 5 շարքերով եր-կու խումբի:

Հեթում Ա.ի Դանկ կոչուած պղինձները իրենց պատկերազարդութեամբ կը նմանին առաջին դասի փողերուն, սակայն թէ՛ ծա-ւալով եւ թէ՛ ծանրութեամբ աւելի փոքր են: Վանքի հաւաքածոն այս դրամներէն ունի 4 խումբերու բաժնուած 11 դրամ:

Վանքի Հեթում Ա.ի դրամներու թիւն է 50 արծաթ եւ 48 պղինձ դրամներ:

* * *

Վանքի հաւաքածոյին մէջ կայ Հեթում Ա. եւ Լեւոն Բ.ի անուններով ոսկեայ դրամ մը որ կեղծ է, ինչպէս կեղծ են դժբախտաբար Ռուբինեան համարեալ բո-լոր ոսկեդրամները, որոնք կը գտնուին զանազան թանգարաններու կամ անհատ-ներու մօտ: Ծրագրած ենք պատրաստել հայկական կեղծ դրամներու (արծաթ կամ ոսկի, Տիգրանեան կամ Ռուբինեան) մա-սին մանրամասն մենագրութիւն մը, որ-պէսզի մեր ազգային զգացումները չհա-ղործող անխիղճ կեղծարարներ չհարու-նեն իրենց չհաստատուածութիւնները: Միակ իսկական ոսկեդրամը կը գտնուի Ս. Ղա-ղարու Թանգարանը եւ կը պատկանի Կոս-տանդին Ա. թագաւորին:

* * *

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՌՈՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Վանքը Սմբատէն ունի միայն մէկ ար-ծաթ դրամ, իսկ պղինձ փոքր դրամներէն 6 դրամ:

Կոստանդին Ա.ի, Սմբատի, Կի-ի, Կոս-տանդին Գ.ի եւ Լեւոն Ե. Լուսինեան թա-գաւորներու դրամները (բացի Սմբատի պղինձներէն) չափազանց հազուադիւր են, եւ դարմանալի չէ, եթէ նշանաւոր հաւա-քածոններու մէջ այս թագաւորներու դրամ-ներուն թիւը մէկ կամ երկուքը չանցնի:

ՕՇԻՆ (ՍԻՇԻՆ) ԹԱԳԱՌՈՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Օշինի արծաթ դրամները, հետեւեալ սկզբնատուերով. - Յ, . Յ, Գ-Մ, Ա-Տ եւ Թ-Տ, - բաժնուած են հինգ խումբե-րու: Օշին ունի նաեւ կրկնադրոյժ հազ-ուադիւր 6 արծաթ դրամ:

ԼԵՒՈՆ Գ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Վանքին այս հաւաքածոն փոքր է: Ընդ-ամէնը 8 արծաթ եւ մի քանի պղինձ մի-այն:

ԼԵՒՈՆ Գ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Լեւոն Գ.ի դրամները բաժնուած են Կ-Մ, Լ-Մ, Ճ-Մ, Թ-Մ, Ի-Մ եւ Թ սկզբ-նատուերով 6 խումբերու, 14 շարքերու, 32 դրամով: Ասոնցմէ զատ Վանքի հաւա-քածոն հարուստ է արարատաւ կրկնա-դրոյժ 26 արծաթ դրամներով:

Ինչպէս Օշինի, նոյնպէս ալ Լեւոն Գ.ի անունով պղինձ դրամներ չունի Վանքի հաւաքածոն:

ԿԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՌՈՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Վանքը Կի թագաւորէն ունի միայն մէկ արծաթ դրամ: Կի-ի արծաթ դրամները խիստ հազուադիւր են, իսկ պղինձները անդամանելի:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ՆՂՐԵԱՆԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Մեղի անձանթ պատճառներով Կոս-տանդին Գ.ի դրամները խիստ հազուա-դիւր են:

Կոստանդին Գ.ի դրամները միւս Կոս-տանդիններու դրամներէն կը զանազան-ուին.

Ա. - Իրենց դաշտի մէջի օղակներով կամ կէտերով եւ դէպի ձախ առիւծով. (ԿՈՍՏԱՆ-անախալ փորագրութեամբ. (ԿՈՍՏԱՆ-ԴԻՆ)).

Գ. - Ոճով եւ արուեստով.

Դ. - Փողերանոցի տարբերութեամբ (ՍԻՄ եւ ՏԱՐՍՈՆ):

Կոստանդին Գ.ի պղինձ դրամները ան-ձանթ են տակաւին:

Ս. Ղաղարու Թանգարանը Կոստ. Գ.էն ունի կիսաւոր երկու դրամ եւ դէպի ձախ ընթացող առիւծով (անտիպ) 1 դրամ:

ԼԵՒՈՆ ԲՈՆԱԿԱԼ

Ս. Ղաղարու հաւաքածոն հարուստ չէ Լեւոն բոնակալի դրամներով. ունի օղա-կաւոր չորս արծաթ միայն:

Լեւոն բոնակալի դրամները կը նմանին

Կի եւ Կոստանդին Գ. թագաւորներու դը-րամներուն: Կի եւ Կոստ. Գ.ի օղակաւոր դրամներու բացարձակ ոճով, Լեւոնը «Վ»ով սկսող այն բոլոր արծաթ դրամնե-րը, որոնք առանց պատճառի Լեւոն Գ.ի տրուած էին, զանոնք կը վերագրենք Կոս. Գ.էն վերջ երկու տարի իշխանութիւն ունեցած Լեւոն Բոնակալին (1363-1365): Օղակաւոր եւ ոչ օղակաւոր այս դրամնե-րը արուեստի եւ ոճի ոչ մէկ աղբիւս ու-նին Լեւոն Գ.ի տափակ դրամներուն հետ եւ ընդհակառակն ա՛յնքան նման Կի-ի եւ Կոստանդին Գ.ի դրամներուն: Բնական է այսքանով չենք բաւարարուիր, այլ՝ մեր այս սահմանումին համար ունինք շատ ա-ւելի հիմնական ու տրամաբանական փաս-տական տուեալներ, որոնք ի նպաստ Լե-ւոն Գ.էն անկախ մէկ ուրիշ Լեւոնի մը մասին կը խօսին կամ կը վկայեն: Այս հարցը մեր զեկուցումի ընթացքին չենք կրնար ընդլայնել, այլ՝ զայն կը ներկա-յացնենք յարմար առիթով մը առանձին:

Մեղի համար կարեւորը այն է որ 1363 - 1365 թուականներուն ունեցած ենք Լեւոն Բոնակալ անունով արքայ մը: Եթէ ունե-ցեր ենք նման իշխանաւոր մը որ գահա-կալած է երկու տարի, ո՛չ մէկ պատճառ ունինք որ իր նախորդին՝ Կոստանդին Գ.ի դրամներուն ոճը եւ արուեստը ներկայա-ցընող օղակաւոր եւ կիսաւոր դրամները (ԼԵՎՈՆ) չտանք Լեւոն Բոնակալ կոչուած թագաւորին:

Կոստանդին Ա., Սմբատ, Կի եւ Լեւոն Լուսինեան թագաւորները, որ իշխած են մէկ կամ երկու տարի, ունեցած են իրենց ոսկի, արծաթ, արծաթապղինձ եւ պղինձ դրամները: Պատճառ մը չկար որ Լեւոն դրամները բացառութիւն կազմէր: Միթէ Բոնակալ բացառութիւն կազմէր: Միթէ բոնակալներ չէին նաեւ Կոստանդին Ա. եւ Սմբատ թագաւորներն ալ: Դժբախտա-բար մատենադրական շատ քիչ բան դի-տենք այս թագաւորի մասին. բացի այն իրողութենէն որ Կոստանդին Գ.ի դրամ-

ներու բացարձակ ոճով ու նշաններով դրամներ ունինք որ « Լեւոն » ի անունով ստորագրուած են :

Նոյնն է Լեւոն Ե. Էն վերջ, 1375-էն մինչեւ 1423 թ. Սիսի մէջ իշխան Կոստանդին անունով թագաւորի մը պարագան, որ 1423-ին Կիլիկիան աշխարհի բոլոր մեծամեծներով եւ 30,000 ընտանիքներով վերջնականապէս կը փոխադրուին Կիպրոս եւ այլուր: Անձնապէս կը հաւատամ որ Լեւոն Լուսինեանի գերեզմանութենէն յետոյ, արարական գերիշխան հովանաւորութեան մը տակ, ունեցած ենք Կոստանդին թագաւոր անունով վերջին իշխանաւոր մը, որ իշխած է քաղաքականապէս տկարացած ու տնտեսապէս քայքայուած Սիսուան աշխարհին վրայ: Ինծի ծանօթ Կոստանդինեան դրամներու ալյաղան խումբերը ի նըպաստ վերջին Կոստանդինի մը կը վկայեն: Կարծէ որ մեր բանասէր վանական Հայրերը ու Կիլիկիան պատմութեամբ հետաքրքրուող յարգելի գիտնականներ այս ուղղութեամբ նոր պրպտումներ կատարեն, որպէսզի փակուէր կասկածելի ու անորոշ մնացած այս երկու հայկազն թագաւորներու ժամանակադրական կարգը ու մեր հայրենի անկախութեան կորուստի վերջնական թուականն ալ կէս դարով յետաձգուէր:

Վերջացնելէ առաջ մեր այս երկրորդ գեկուցումը, տանք նաեւ մեր վերջին երկու թագաւորներուն՝ Կոստանդին Գ. ի (1365-1374) եւ Լեւոն Ե. Լուսինեանի (1374-1375 + 1393) դրամներու մասին քանի մը տեղեկութիւններ:

Սուրբ Ղազարու Թանգարանի հաւաքածոյին ամենակարեւոր մասը կը կազմեն անոնք:

Կոստանդին Գ. ի արծաթ դրամները կը բաժնուին երեք խումբերու.

Ա. խումբ, առանց ո եւ է նշանի.

Բ. խումբ, Լ սկզբնատառով.

Գ. խումբ, դաշտին մէջ . Երեք կէտերով:

Արծաթադրինձ դրամներու թիւն է՝ 6: Այս դրամներէն ոմանք քիչ առաջ յիշած Կոստանդին Ե. թագաւորին յետ - Լուսինեան շրջանին կը պատկանին: Օր մը երբ յարմար առիթով ներկայացնենք այս թագաւորը, կու տանք նաեւ անոր դրամներու մասին ծանօթութիւններ:

Իսկ Լեւոն Ե. Լուսինեան ունի միայն մէկ փոքր պղինձ:

Ե.

Յարգելի ընթերցողներս կը ներեն որ երբեմն մեր գեկուցումի սահմանէն դուրս ելանք: Մեր նպատակը այս յարմար առիթէն օգտուելով ցոյց տալ է մեր ազգային դրամագիտութեան հետաքրքրականութիւնը եւ այն բոլոր յարակից հարցերը որ ակամայ կը դրուին մեր առջեւ: Որովհետեւ այսօրուան դրամագիտութիւնը այն չէ՝ ինչ որ էր կէս դար առաջ: Այսօր չի բաւեր տալ դրամի չոր նկարագրականը միայն ու անցնիլ: Դրամները անսպառ աղբիւրը կը հանդիսանան նորանոր հարցականներու, որոնք այս կամ այն ձեւով կապ մը, աղբիւր մը ունին անձանթ կամ անորոշ մնացած ո եւ է պատմական, գիտական, գեղարուեստական, տնտեսական, ազգային - առհասարակ կամ կրօնական հարցերուն հետ: Չափազանց հակիրճ գիծերով ներկայացուած, ահա այս է Ս. Ղազարու Թանգարանի Ռուբրիկեան դրամներու այս նշանաւոր հաւաքածոյի ընդհանուր պատկերը, որ կը յուսանք նորանոր յաւելումներով եւ մասնաւոր նուիրատուութիւններով աւելի պիտի կատարելադործուի ու ճշխանայ, ի պարծանս Հայ Ժողովուրդին ու անոր դարաւոր պատմութեան:

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Փարիզ, 1952, Յունիս

ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՆՔԵՐ

ԱՐԵՎԵԼԻ

Կիլիկիան պատմութեան մէջ Արեւելի անապատը ունի իր առանձնայատուկ տեղը: Արեւելի վանքին հիմնարկութեան թըլուէն անյայտ կը մնայ, առաջին անգամ կը յիշուի, Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոսի օրով՝ 1065 թուականներուն: Բայց ինչպէս յայտնի կ'երեւի, Կիլիկիան շրջանին մէջ ակնառու դիրք մը կը զբաղէր այդ վանքը եւ իբր ուսումնարան կը ծառայէր Սեաւ լեռան վանքերու ու մենակեացներու, հայթայթելով վարդապետներ ու եպիսկոպոսներ: Վկայասէր՝ կաթողիկոս օծուելէ յետոյ նախընտրեց Արեւելի վանքին մէջ բնակիլ ու հոն հայրախօսական ուսումնասիրութիւններ կատարել ու թարգմանութիւններով զբաղիլ:

Պահլավունի Ապիրատ իշխանը երբ մեռաւ, անոր երկու անչափահաս զաւակները՝ Գրիգորն ու Ներսէսը - ապագայի Շնորհալին - որ իր քեռորդին զաւակներն էին՝ իր մօտ բերել տալով Արեւելի վանքին մէջ անոնց կրթութեան հոգ տարաւ:

« ԶԳրիգորիս էառ առ իւր Գրիգոր վրկայասէր, եւ անուցանէր ի վանս Արեւելի Անապատին որ ի Սեաւ լեռին եւ յետ սա կառուց էառ եւ զկրտսեր եղբայր նորին Գնեթսէս » - Շնորհալի:

Գաղիկ Արասեան իբր վտարանդի արքայ Ծամնդաւ կը նստէր եւ իր միջամտութեան շնորհիւ Վկայասէր կաթողիկոս օծուած էր, եւ անշուշտ կաթողիկոսական աթոռը՝ իբր պաշտօնատեղի Ծամնդաւը բնակէր, որ կաթողիկոսները Հայ վորութեան, որ կաթողիկոսները Հայ թագաւորին մօտ պէտք է ըլլային իբր խորհրդանիշ Ազգային միութեան եւ միասնականութեան:

Բայց Վկայասէր չառ հեղ կը սիրէր մնալ Արեւելի վանքին մէջ, օգտուելով վանականներէն, իբր թարգմանութեանց եւ ընդօրինակութեանց մէջ՝ անոնց աշխատութիւններով:

Գաղիկ Արասեանի մեռնելէն յետոյ, 1079-ին, Վկայասէր հաստատուեցաւ վերջնականապէս Արեւելի վանքը: Իրեն յաջորդող Բարսեղ Անեցի Կաթողիկոսն ալ միշտ Արեւելի վանքը կ'այցելէր ու կը մնար հոն:

Արեւելի վանքը կեդրոն տեղ մըն էր, քիսուսի կարմիր վանքին, եւ հռչակաւոր Շուրի վանքին մէջտեղուանքը. « Սեաւ եւ մթին » լեռան անառիկ դիրքի մը մէջ բոյն դրած:

Շնորհալին, Վկայասէրի մասին խօսած ատեն կ'ըսէ.

Մինչ ի Տաւրոս լեռքն հասնալ
Անդ ուր Սրբոց բնակի եղեալ,
Ի Սեաւ մթին լեռն անուանեալ
Ուր եւ հոգիք լուսաւորեալ
Եւ ընդ մոսին յար խօսեցեալ:

« Սեաւ ու մթին լեռ » Ամանոսեան լեռներն են, որ Աղեքսանդրեակի ծոցէն սկըսեալ կը տարածուին դէպի հիւսիս՝ լայնանիստ վեհօթեամբ, եւ կը հասնին մինչեւ Ջահան գետի ձախ ափերը: Ջահանի աջ ափերէն վեր, Տաւրոսեան լեռները ու անոր ձիւնապատ զաղաթները կ'երկարին արեւելք, կազմելով հայկական Տաւրոսեան լեռները: Մեր պատմագիրները՝ ինչպէս նաեւ Շնորհալին, « Սեաւ ու մթին » լեռ կը կոչեն Ջահան գետին հիւսիսը ու Տաւրոս լեռներու ստորոտը տարածուող այս հողամասերը, որ անտառներով, մացառներով ու լեռնադաշտ հովիտ ու ձորերով, անանցանելի կիրճերով լայնածաւալ գետին մը կը կազմեն:

Այս մթին ու անտառուտ, միեւնոյն ատեն անմատչելի հողամասին մէջ մենք ունեցած ենք մէկէլ հռչակաւոր վան-